

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ներածություն	3
1. Հայագիտական կենտրոն	5
2. Քաղաքական հետազոտությունների կենտրոն	7
3. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոն	9
4. Ուսումնական կենտրոն	11
5. Հրատարակչական կենտրոն	13
6. Գործունեության ապահովման ծրագիր	15
Հավելված 1. Հայագիտական կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները	16
Հավելված 2. Քաղաքական հետազոտությունների կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները	19
Հավելված 3. Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները	24
Հավելված 4. Գործունեության ապահովման ծրագրի 2009թ. ծախսերը	27

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2009 թվականին Հիմնադրամն իրականացրել է աշխատանքներ *Հայագիտական, Քաղաքական հետազոտությունների, Ուսումնական, Տեղեկատվական, Հրատարակչական* կենտրոնների և *Գործունեության ապահովման* ծրագրերի շրջանակներում՝ համաձայն Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված պլանների և ռազմավարության:

Հրատարակումներ

2009թ. Հիմնադրամի կողմից հրատարակվել են 8 գիրք, 12 համար «21-րդ ԴԱԸԵ, 12 համար «Գլոբուսե հանդես (մանրամասն տե՛ս Հավելված 1 և 2):

Ընդհանուր առմամբ – 32 հրատարակում:

Հրապարակումներ

«Նորավանքե-ի աշխատակիցները հեղինակել են **141 տպագիր** աշխատանք, այդ թվում՝ 8 գիրք:

Հիմնադրամի աշխատանքներին ներգրավված փորձագետների թիվը՝ **56:**

Կայք

2009թ. կայքէջի այցելուների ընդհանուր թիվը կազմում է **123.200**. Կայքէջ միջին այցելությունների թվաքանակը 2009թ. կազմել է **օրական 400 հոգի**, որը 2,5 անգամ ավելին է, քան 2008թ. և 4,5 անգամ ավելի, քան 2007թ.:

Գիտաժողովներ, սեմինարներ

Հիմնադրամի աշխատակիցները **10 զեկուցումներով հանդես են եկել 10 միջազգային գիտաժողովներում, հանդես են եկել մի շարք տեղական գիտաժողովներում:**

Ուսումնական կենտրոնն իրականացրել է **16 սեմինար:**

ԶԼՄ-ին տրվել են մի քանի տասնյակ հարցազրույցներ:

Ամառային դպրոց

ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հետ համատեղ կազմակերպվել է «Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները խորագրով «Ամառային դպրոցը, որին մասնակցել են շուրջ 50 ուսանող, ԶԼՄ ներկայացուցիչներ, պետական և մասնավոր մի շարք հիմնարկների աշխատակիցներ:

Կապերը

Հիմնադրամը համագործակցում է ազգային, հասարակական և միջազգային կառույցների հետ: Դրանց թվում են ՀՀ Սփյուռքի, Կրթության և գիտության նախարարությունները, «ՀայՌուսգազարդե ՓԲԸ-ն, Գիտության պետական կոմիտեն, Երևանի պետական համալսարանը, ՀՀ Ազգային անվտանգության խորհուրդը: Ամրապնդվել են կապերը Արևմտահայության համագումար (WAC) միջազգային կազմակերպության, Ֆոնդային շուկայի զարգացման ինստիտուտի (IRFOR, ք.Մոսկվա), Սոցիալական գիտությունների ինստիտուտի (ք.Մոսկվա), Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (МГИМО), Իսրայելի բաց համալսարանի, ԱՊՀ և Արևելյան Եվրոպային ինստիտուտի (Թեյ Ավիվ) հետ: և

Աշխատակազմը

Հաստիքացուցակում ընդգրկված են **39 աշխատակից**, որոնք բաշխված են ըստ հետևյալ ոլորտների.

- հետազոտական-ուսումնական ոլորտում - **18 փորձագետ**, որոնցից 1-ը` գիտ. դոկտոր, 6-ը` գիտ. թեկնածու, 2 փորձագետ պատրաստում են թեկնածուական թեզ,
- տեղեկատվական-հրատարակչական ոլորտում - **9** մասնագետ, որոնց թվում` 1 գիտ. թեկնածու,
- վարչական- տնտեսական բաժնում – **5** աշխատակից,
- տեխնիկական աշխատակազմ (պահակային հերթափոխային ծառայություն, հավաքարարներ) – **7** աշխատակից:

1. ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Ռուբեն Մելքոնյան

Հայագիտական կենտրոնում աշխատում են 6 աշխատակից՝ Ռուբեն Մելքոնյան (կենտրոնի ղեկավար), փորձագետներ Արեստակես Սիմավորյան, Վահրամ Հովյան, Թամարա Վարդանյան, Տիգրան Ղանալանյան, Էդուարդ Ղանիելյան (խորհրդակցական): 2009թ. Հայագիտական կենտրոնի աշխատակիցները և ներգրավված փորձագետները հեղինակել են թեմատիկ ուղղությամբ 57 աշխատանք, որոնցից 45-ը՝ կենտրոնի աշխատակիցների կողմից, այդ թվում՝ 2 գիրք, մասնակցել 3 միջազգային գիտաժողովների (մանրամասն տե՛ս Հավելված 1):

Կենտրոնն ակտիվորեն համագործակցում է Սփյուռքի նախարարության և ԵՊՀ-ի հետ:

Հայագիտական կենտրոնում աշխատանքներն իրականացվել են ըստ տարեսկզբին հաստատված աշխատանքային պլանի և հետևյալ ուղղություններով.

1. Կրոնափոխ, տարադավան, տարալեզու հայության խնդիրների ուսումնասիրություն
2. Ջավախքի համայնքային և տեղեկատվական խնդիրների ուսումնասիրություն
3. Թիֆլիսի հայ համայնքի խնդիրների ուսումնասիրություն
4. Թուրքական և վրացական think-tank-երի ուսումնասիրություն
5. Ազգակերտման իսրայելական փորձի ուսումնասիրություն:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել է Թուրքիայի իսլամացված և ծպտյալ հայերի խնդրի ուսումնասիրությունը, այս ուղղությամբ հետազոտական աշխատանք է կատարվել նաև Ստամբուլում: Իսլամացված հայության տարբեր շերտերում ազգային պատկանելության գիտակցումը և հիշողությունը ներկայումս նոր ձևավորումների և արտահայտումների գործընթացում են, որոնք անպայմանորեն շաղկապված են Թուրքիայում տեղի ունեցող զարգացումների, տիրող մթնոլորտի և այլ հանգամանքների հետ:

Կատարվել է Թուրքիայի և Ջավախքի հայ կաթոլիկ համայնքների ուսումնասիրություն: Մասնավորապես, Ջավախքում իրականացվել են դաշտային հետազոտական աշխատանքներ: Յուրաքանչյուր համայնքի առջև ծառայած են բազմապիսի՝ հոգևոր-եկեղեցական, կրթական, ուժացման և այլ խնդիրներ: Կազմակերպված համայնքների պարագայում այդ խնդիրները նվազագույնի են հասցված, չկազմակերպված համայնքներում դրանք առկա են և ավելի խորանալու միտում ունեն:

Ուսումնասիրություններ են իրականացվել Ջավախքի տեղեկատվական միջավայրի և ժողովրդագրական պատկերի ուղղությամբ, մասնավորապես՝ Ջավախքի հիմնախնդրի տեղեկատվական շահարկումը երրորդ պետությունների կողմից, թուրք-մեսխեթցիների վերադարձի խնդիրը, որը գտնվում է տարածաշրջանի և դրանից դուրս գտնվող տարբեր երկրների շահերի տիրույթում:

Թիֆլիսահայ համայնքի ուսումնասիրություններում շեշտը հիմնականում դրվել է կրթական վիճակի և տեղեկատվական միջավայրի հետազոտման վրա: Թիֆլիսահայ համայնքը ներկայումս շարունակում է գտնվել աստիճանական անկման փուլում: Վերահայության կրթական հիմնախնդիրների շարքում առանձնակի տեղ են զբաղեցնում «պատմությունե առարկայի դասավանդմանն առնչվող խնդիրները»:

Կենտրոնը մասնակցել է Սփյուռքի նախարարության համար թիֆլիսահայ համայնքի զարգացման հայեցակարգի մշակման աշխատանքներին:

Թուրքական think tank-երի (որոնք գլխավորապես զբաղվում են պետական նշանակության ռազմավարական խնդիրների համալիր մշակմամբ ուղղությամբ)

ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նրանք սկսում են մեծ դեր խաղալ Թուրքիայի քաղաքական և հասարակական կյանքում:

Վրաստանի think-tank-երի և ակադեմիական հաստատությունների ուսումնասիրության արդյունքում բացահայտվում է, որ դրանք հավակնություններ ունեն ստանձնելու տարածաշրջանի ժողովրդավարացման գործընթացը ղեկավարողի դերը: Վրաստանի think tank-երի ծրագրերն ու հետազոտական աշխատանքներն առավել ազգայնական են:

Ուսումնասիրվել է Իսրայելում կրթության և գիտության դերը ազգակերտման գործում: Կարելի է եզրակացնել, որ Իսրայելի կրթական համակարգը ճկունորեն է արձագանքում երկրի ժողովրդագրական, էթնիկ, ներէթնիկ և ներքաղաքական պատկերի առանձնահատկություններին, համաշխարհային տնտեսության զարգացումներին և դրանցում տեղ գտնող փոփոխություններին: Կրթական համակարգում կիրառվում են գիտականորեն մշակված մոտեցումներ: Երբայերեն լեզվի վերակենդանացումը, տասնամյակներ շարունակ այդ գործընթացի նկատմամբ համահրեական կառուցվածքային մոտեցումների մշակումը և իրականացումը, դրանով ուղեկցվող ազգայնականության վերելքի փորձը խիստ օգտակար են աշխարհասփյուռ Հայության համար:

Կենտրոնում աշխատանքներ են կատարվել նաև արտասահմանի հայագիտական կենտրոնների ուսումնասիրության ուղղությամբ, կազմվել է տարբեր բուհերում դասավանդող հայագետ դասախոսների նախնական ցուցակ, որը շարունակաբար համալրվում է:

Կենտրոնը ՀՀ Սփյուռքի նախարարության պատվերով իրականացրել է 2 հիմնարար հետազոտություն՝ Թուրքիայում իսլամացված հայերի և Վրաստանի կաթոլիկ հայերի հիմնախնդիրների մասին, որոնք հրատարակվել են 2 առանձին գրքերի տեսքով:

2010թ. աշխատանքային պլանները

2010թ. այլադավան հայերի խնդիրների ուսումնասիրության շրջանակներում «Նորավանքե ԳԿՀ Հայագիտական կենտրոնի փորձագետները նախատեսում են *ուսումնասիրել հետևյալ ուղղությունները.*

- Իսլամացած և այլալեզու հայերի հիմնախնդիրները Թուրքիայում:
- Ախալցխայի (Սամցխե) հայ կաթոլիկ գյուղերի և վրացացած հայ կաթոլիկների արդի հիմնախնդիրները:
- Թուրքիայի հայ կաթոլիկ համայնքի արդի հիմնախնդիրները (եկեղեցիների գործունեությունն ու դերը համայնքի կյանքում, Մխիթարյան միաբանության ենթակա դպրոցների իրավիճակը):
- Հրատարակել հայ կաթոլիկ թեմերի, համայնքների թվաքանակի, բնակավայրերի, համայնքապատկան կազմակերպությունների, կրթական օջախների վերաբերյալ գրքույկ կամ տեղակագիր:
- Բողոքական հայերի վերաբերյալ առկա գրականության, ինչպես նաև այլ տեսական նյութերի հայթայթում, ուսումնասիրում և համակարգում:
- Վրաստանում էթնիկ և կրոնական փոքրամասնությունների վրացացման գործընթացները:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱԳՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Սևակ Սարուխանյան

«Նորավանքե ԳԿՀ «Քաղաքական հետազոտությունների կենտրոնում» աշխատում են 4 փորձագետ՝ Սևակ Սարուխանյան, Արաքս Փաշայան, Կարեն Վերանյան և Սերգեյ Սարգսյան: Կենտրոնի աշխատակիցները 2009թ. հեղինակել են 54 հոդված, այդ թվում՝ 1 գիրք (տե՛ս Հավելված 2) և մասնակցել են 5 միջազգային գիտաժողովի:

Կենտրոնը համագործակցում է «ՀայՌուսագաղարդե ՓԲԸ-ի, Իսրայելի բաց համալսարանի, Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի, Ռազմավարական հետազոտությունների միջազգային ինստիտուտի (Լոնդոն), Սփյուռքի նախարարության և այլ հաստատությունների հետ:

«Նորավանքե ԳԿՀ Քաղաքական հետազոտությունների կենտրոնի 2009թ. աշխատանքներն իրականացվել են համաձայն 2009թ. աշխատանքների համար հաստատված ծրագրերի, որոնք ընդգրկում են հետազոտություններ հետևյալ ուղղություններով.

- Տարածաշրջանային էներգետիկ անվտանգություն
- Հայաստանը գլոբալ աշխարհում – վարկանիշային ուսումնասիրություն
- Էթնոդավանական խնդիրները Հարավային Կովկասում:

2009թ. աշխատանքների հիմնական արդյունքները

«Տարածաշրջանային էներգետիկ անվտանգությունն ուղղություն

Հետազոտությունների հիմնական ուղվածությունն է եղել տարածաշրջանային էներգետիկ նախագծերի զարգացման և իրականացման ընթացքի ուսումնասիրումը: Այս ուղղության շրջանակներում կատարվել են կարևոր հետազոտություններ, որոնցից են.

1. Կազմվել են առաջարկություններ այն հիմնական ծրագրերի վերաբերյալ, որոնք կարող են օգտագործվել հայ-իրանական համագործակցության զարգացման համար, բարձրացնել ՀՀ տարածաշրջանային մրցակցությունը:
2. Կազմվել են առաջարկություններ Հայաստանի՝ «Նաբուկկոնե գազատարի կառուցմանը հնարավոր մասնակցության մասին, հետազոտվել են այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են խրախուսել ՀՀ էներգետիկ դերի և կշռի բարձրացումը:
3. Կատարվել են հետազոտություններ՝ նվիրված ՀՀ էներգետիկ համակարգի կայունության ինդեքսի դուրսբերմանը:

Հայաստանը գլոբալ աշխարհում – վարկանիշային ուսումնասիրություն

Հետազոտությունների հիմնական ուղղվածություններն են եղել վարկանիշային հետազոտությունների ուսումնասիրությունները և ՀՀ-ի համար ակտուալ նշանակության քաղաքական հետազոտությունների իրականացումը: Այս ուղղության շրջանակներում կատարվել են կարևոր հետազոտություններ.

1. «Հայաստանի միջազգային վարկանիշը» նախագծի շարքում հետազոտվել է ՀՀ դերը տարբեր վարկանիշային ցուցանիշներում, մատնանշվել են այն հիմնական գործոնները, որոնք բերում կամ կարող են բերել ՀՀ վարկանիշային մրցունակության բարձրացմանը:
2. Ուսումնասիրվել են տարածաշրջանային ռազմաքաղաքական ոլորտի իրավապայմանագրային և գիտատեխնիկական համագործակցության հարցեր, հրատարակվել են ակտուալ նշանակություն ունեցող՝ Ադրբեջանի ռազմական արդյունաբերության ոլորտին առնչվող հետազոտություն:

Էթնոդավանական խնդիրները Հարավային Կովկասում

Հետազոտությունների հիմնական ուղղվածություններն են եղել ՀՀ-ի համար կարևոր նշանակություն ունեցող տարածաշրջանային էթնոդավանական գործընթացները: Այս ուղղության շրջանակներում ուսումնասիրվել է.

- Միջազգային և Ադրբեջանի իսլամական գործոնի նշանակությունը հայ-ադրբեջանական հակամարտության հարցում, մատնանշվել են այն հիմնական ուղղությունները, որոնք կարող են ազդեցություն ունենալ Ղարաբաղյան հակամարտության կարգավորման գործընթացում:

Կենտրոնը ՀՀ ***Միջուկի նախարարության*** պատվերով իրականացրել է հիմնարար հետազոտություն՝ նվիրված ***Իսրայելի հայության հիմնախնդիրներին***: Հետազոտության իրականացմանը ներգրավվել են առաջատար մասնագետներ ՀՀ-ից, Իսրայելից և Ռուսաստանից: Աշխատանքների ընթացքում ամրապնդվել են «Նորավանքե ԳԿՀ կապերը իսրայելական առաջատար կենտրոնների և հետազոտողների հետ, ինչը թույլ կտա գալիք տարում իրականացնել հայ-իսրայելական հարաբերություններին և Իսրայելի հայության հարցերին առնչվող հիմնարար ուսումնասիրություններ:

2009-ին կատարվել են Իսրայելի քաղաքական և գիտավերլուծական համակարգերի հիմնախնդիրներին նվիրված հետազոտություններ, որոնք հիմք կհանդիսանան 2010-ին հայ-իսրայելական հարաբերություններում առկա խնդիրների հիմնարար ուսումնասիրություն իրականացնելու համար:

2010թ. աշխատանքային պլանները

2010թ. Քաղաքական հետազոտությունների կենտրոնը շարունակելու է ծրագրային հետազոտությունները՝ կատարված աշխատանքներին տալով ավարտուն բնույթ, մշակելու և ներկայացնելու է առաջարկություններ՝ ՀՀ էներգետիկ և տարածաշրջանային անվտանգության և մրցունակության մակարդակի բարձրացման վերաբերյալ:

Նախատեսվում է 2010-ի հետազոտությունները կենտրոնացնել հիմնական երկու ուղղություններում՝ ՀՀ և տարածաշրջանային էներգետիկ անվտանգություն և միջպետական հարաբերությունների հիմնախնդիրները տարածաշրջանում: Առաջին ուղղությունը հաջորդականություն է հաղորդելու նախորդ տարիներին իրականացվող հետազոտություններին, իսկ երկրորդ՝ համեմատաբար նոր ուղղության թիրախն են լինելու ՀՀ և տարածաշրջանային պետությունների միջև հարաբերությունները, դրանց զարգացման ռեսուրսների հայտնաբերումը, հիմնախնդիրների հայտնաբերումը և ՀՀ տարածաշրջանային մրցունակությունը մեծացնող առաջարկությունների մշակումը:

Նախատեսվում է իրագործել «Հայաստանի ուղեղային կենտրոնները հետազոտությունը, որի կենտրոնական թեման ՀՀ-ում գործող քաղաքական, հասարակական ու գիտական կազմակերպությունների գործունեության, ֆինանսական աղբյուրների և ներուժի ուսումնասիրությունը, շարունակել և առանձին գրքույկով հրատարակել վարկանիշային հետազոտությունները:

3. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Գագիկ Հարությունյան

«Նորավանքե ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնում աշխատում են 7 փորձագետ՝ Գագիկ Հարությունյան, Աննա Ժամակոչյան, Դիանա Գալստյան, Սոնա Մանուսյան, Սամվել Մարտիրոսյան, Մուրեն Մարտիկյան, Արեն Վարդապետյան: Կենտրոնի աշխատակիցները 2009թ. հեղինակել են 42 հետազոտություն՝ այդ թվում 5 գիրք (տե՛ս Հավելված 3) և մասնակցել են 2 միջազգային գիտաժողովի:

ՏՀ կենտրոնի գործունեությունն ընթացել է տարեսկզբին հաստատված աշխատանքային պլաններին և նպատակային ուղղություններին համապատասխան:

1. Հայության տեղեկատվական անվտանգության համակարգային խնդիրները, այդ թվում՝ Հայության տեղեկատվական ցանցային կազմակերպման հարցերին աջակցությունը:

Աշխատանքների արդյունքում ձևակերպվել են տեսական մոտեցումներ արդի համաշխարհային մարտահրավերների համատեքստում Հայության տեղեկատվական անվտանգության գաղափարախոսական, համակարգային խնդիրների շուրջ: Մասնավորապես մշակվել է Հայության կազմակերպման հարցում տեղեկատվական անվտանգության հարցերն իբրև գաղափարախոսական հիմք ընդունելու մասին դրույթը:

ՀՀ Սփյուռքի նախարարության հետ համատեղ իրականացվել է **«Հետխորհրդային տարածքի հայկական համայնքներում տեղեկատվական և մշակութային ռեսուրսների ուսումնասիրությունը**» նախագիծը: Արդյունքում լույս է տեսել **«Հետխորհրդային երկրների հայ համայնքների ռեսուրսները**» գիրքը, որտեղ հաշվազրվել են հետխորհրդային 13 երկրների հայկական համայնքային-մշակութային կառույցներ և ՁԼՄ՝ այդ թվում էլեկտրոնային:

Կիրառական դաշտում **«Ժամանակակից հայ կապիտալի ուսումնասիրությանը նախագծի** շրջանակներում իրականացվել է ռուսաստանաբնակ հայ ձեռնարկատերերի և նրանց տնտեսական ներուժի «հաշվազրման» աշխատանքների ամփոփումը, լույս է ընծայվել **«Հայկական քիզնես-վերնախավը Ռուսաստանում**» ռուսերեն կենսագրական տեղեկատու:

2. Հոգեբանական և հոգևոր անվտանգության խնդիրների ուսումնասիրությունը և պաշտպանության հարցերը:

Հոգևոր անվտանգության թեմայի առնչությամբ «Նորավանքե ԳԿՀ-ն, համագործակցելով ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների կրոնի հարցերի վարչության հետ, կազմակերպել է 2 կլոր սեղան: Քննարկումները նվիրվել են հոգևոր անվտանգության քաղաքականության խնդիրներին, որոնց արդյունքում ձևավորվել է հոգևոր անվտանգության հարցերով աշխատանքային խումբ:

ՀՀ հոգեբանական անվտանգության պաշտպանության աջակցությանն ու Հայության մեջ պարտվողականության բարդության հաղթահարմանը նպատակաուղղված՝ **«Մեր հաղթանակները նախագծի** շրջանակներում ավարտվել են **«Մեր հաղթանակները**» քառահատորի երկրորդ հատորի աշխատանքները, հատորը հանձնվել է տպագրման:

3. Տեղեկատվական պատերազմներում Հայության անվտանգության հարցերը, այդ թվում՝ տեղեկատվական տեքստերի բովանդակային խնդիրների ուսումնասիրությունը, վերջիններիս հետազոտման մեթոդաբանական մշակումները և էլեկտրոնային կայքերի տեխնիկական անվտանգության հիմնախնդիրների ուսումնասիրությունը:

Ադրբեջանական կայքերի մոնիթորինգի արդյունքում ձևավորվել է այդ երկրի կողմից հակահայկական տեղեկատվություն տարածող էլեկտրոնային կայքերի, թերթերի և

լրատվական գործակալությունների բազա, ուսումնասիրվել և հաշվազրվել են ադրբեջանական վերլուծական կենտրոնները, այդ թվում՝ Հայաստանի և Հայության դեմ տեղեկատվական պատերազմներում ընդգրկվածները և դրանց էլեկտրոնային կայքերը: Տեղեկատվական տեքստերի որակական ուսումնասիրության արդյունքում մշակվել են հակահայկական տեղեկատվական տեքստերի հետազոտման մեթոդաբանական հիմքերը: Ուսումնասիրվել և բացահայտվել են ՀՀ ինտերնետ ոլորտի տեղեկատվական անվտանգության բովանդակային և տեխնիկական սպառնալիքները, մշակվել դրանց հաղթահարման սկզբունքները Հայաստանի համար: ՀՀ, ԼՂՀ և Հայության տեղեկատվական անվտանգության հայեցակարգային մոտեցումների քննարկման նպատակով կազմակերպվել է 1 կլոր սեղան: Կենտրոնը բովանդակային մասնակցություն է ունեցել «Նորավանքե ԳԿՀ Ուսումնական կենտրոնի և ԳՊԿ համատեղ կազմակերպած «Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները աշնանային դպրոցի իրականացման գործում:

Կիրառական դաշտում **«Ադրբեջանի կողմից հակահայկական տեղեկատվության քաղաքականության վարման համակարգը և հակազդման ռազմավարությունը»** նախագծի շրջանակներում «Նորավանքե ԳԿՀ ՏՀ կենտրոնի փորձագետները, ՀՀ ՊՆ «Դ.Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի փորձագետների հետ համատեղ, ուսումնասիրել են հակահայկական ինֆորմացիոնային համակարգն Ադրբեջանում և Հայաստանի կողմից դրան հակազդելու հնարավորությունները: «Նորավանքե ԳԿՀ-ի կողմից հրատարակվել է հետազոտությունն ամփոփող **«Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը»** գիրքը:

Կազմվել և հրատարակվել է նաև **«Տեղեկատվական անվտանգության որոշ հարցեր»** ռուսերեն ժողովածուն, որն ամփոփում է տեղեկատվական պաշտպանության և ցանցային կազմակերպման հարցերին նվիրված «Նորավանքե ԳԿՀ և գործընկեր փորձագետների ուսումնասիրությունները և «Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները աշնանային դպրոցի ելույթները: Այն նպատակաուղղված է հետխորհրդային երկրների հայության ռուսալեզու հանրություններին:

ՏՀ կենտրոնը համագործակցում է հետևյալ հաստատությունների հետ՝ ՀՀ ԱԱԽ, ՀՀ ՄՆ, ՀՀ ՊՆ, ՀՀ ԳՊԿ, ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների կրոնի հարցերի վարչություն, WAC և IRFOR կազմակերպությունների հետ:

ՏՀ կենտրոնի 2010թ. աշխատանքային ծրագրերը

ՏՀ կենտրոնի գործունեությունը 2010թ. ընթացքում կընթանա կենտրոնի հիմնական նպատակային ուղղություններին համապատասխան:

- *Հայության տեղեկատվական ցանցային կազմակերպման հարցերին աջակցության ուղղությունում կշարունակվեն Հայության տեղեկատվական ռեսուրսների ուսումնասիրությունները և գործնական քայլեր կկատարվեն հետխորհրդային երկրների հայկական ՋԼՄ ներկայացուցիչների ցանցային կազմակերպման և տեղեկատվության փոխանակման արդյունավետ համակարգի ներդրման ուղղությամբ:*
- *Հոգեբանական և հոգևոր անվտանգության խնդիրների ուսումնասիրության և պաշտպանության հարցերում կշարունակվեն «Մեր հաղթանակները քառահատորյակի կազմման և հրատարակման աշխատանքները, ինչպես նաև կգործի հոգևոր անվտանգության հարցերով աշխատանքային խումբը:*
- *Տեղեկատվական պատերազմներում Հայության անվտանգության հարցերի շրջանակներում կշարունակվեն ադրբեջանական տեղեկատվական հոսքերի ուսումնասիրությունը, դրանց սոցիոհոգեբանական հետազոտման մեթոդաբանական մշակումները, ինչպես նաև էլեկտրոնային կայքերի տեխնիկական անվտանգու-*

թյան հիմնախնդիրների ուսումնասիրությունը: Այս ուղղությունում նաև Թուրքիայի կողմից տարվող ինֆորմացիայի հետազոտման քայլեր կկատարվեն:

4. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Տիգրան Հարությունյան

2009թ. նախատեսված ուսումնական ծրագրի համաձայն, կատարվել են աշխատանքներ ամառային դպրոցների, սեմինարների կազմակերպման միջազգային փորձի ուսումնասիրության ուղղությամբ: Հիմնական ուշադրությունը դարձվել է PRGS (Pardee Rand Graduate School) հեղինակավոր դպրոցի փորձի, աշխատանքի, ծրագրերի ուսումնասիրությանը:

Քաղաքական հետազոտությունների կենտրոնի, ՀՀ ԿԳՆ-ի և ՀՀ ԳՊԿ-ի հետ համատեղ քննարկումներ են անցկացվել Համահայկական համալսարանի, Հայկական հետազոտական համալսարանի հայեցակարգերի մշակման շուրջ: Մշակվել է «Նորավանքե համալսարանի հայեցակարգը»:

ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հետ համատեղ կազմակերպվել է «Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրները խորագրով «Ամառային դպրոցը, որին մասնակցել են շուրջ 50 ուսանող, ԶԼՄ ներկայացուցիչներ, պետական և մասնավոր մի շարք հիմնարկների աշխատակիցներ: Դասախոսություններով հանդես են եկել 10 փորձագետ: Հրատարակվել է «Ամառային դպրոցի զեկուցումների հիման վրա ժողովածու ռուսերեն լեզվով»:

Կազմակերպվել են սեմինարներ և գիտաժողովներ: Դրանք թույլ են տվել երիտասարդ մասնագետների, պետական ծառայողների, լրագրողների և այլ մասնագետների մեջ ձևավորել արդիական պատկերացումներ հասարակագիտական և քաղաքագիտական ոլորտների վերաբերյալ, այդ թվում՝ «Նորավանքե ԳԿՀ-ում ուսումնասիրվող թեմաների շուրջ»:

«Նորավանքե գիտակրթական հիմնադրամի 2009թ. սեմինարների և գիտաժողովների ցանկ

Թիվ	Թեմաներ	Ջեկուցողներ
1.	«Վիրահայոց խնդիրները»	Գագիկ Հարությունյան, Թամարա Վարդանյան, Սևակ Արծրունի
2.	«Հոգևոր անվտանգության խնդիրների շուրջ»	Գագիկ Հարությունյան, Արմեն Աշոտյան, Հրանուշ Խառատյան, Հովակիմ վարդապետ Մանուկյան
3.	«ՀՀ Տեղեկատվական անվտանգության ՀՀ հայեցակարգի մշակման խնդիրների շուրջ»	Գագիկ Հարությունյան, Մամվել Մարտիրոսյան
4.	«Համակարգային ճգնաժամ. հեռանկարների վարկածները թեմայով գիտաժողով»	Մերգեյ Գրինյան, Գագիկ Հարությունյան, Հրաչյա Արզումանյան, Արա Մարջանյան
5.	«Համահայկական համալսարանի տեսլականի քննարկումներ»	Սպարտակ Մեյրանյան, Մամվել Հարությունյան, Գագիկ Հարությունյան, Սևակ Մարտիրոսյան, Արա Մարջանյան

Թիվ	Թեմաներ	Ջեկուցողներ
6.	Հետխորհրդային մշակույթի հետազոտությունների հարցեր	Հրաչյա Բայադյան
7.	«ՀՀ Գիտաբանական կողմից կատարված աշխատանքների և Հայկական հետազոտական համալսարանի տեսլականի քննարկումները»	Մամվել Հարությունյան
8.	«Հայագիտական կենտրոնի հետազ. արդյունքները»	Ռուբեն Մելքոնյան
9.	«Հոգևոր անվտանգություն»	Վարդան Ասցատրյան, Գագիկ Հարությունյան, Արտակ Դավթյան, Ռազմիկ Մարկոսյան, Կարինե Նաչաջյան, Դավիթ Ջամալյան
10.	«Վիրահայոց խնդիրները»	Գագիկ Հարությունյան, Թամարա Վարդանյան, Սևակ Արծրունի
11.	«Թուրքիայի կրոնափոխ և ծպտյալ հայերը. կատեգորիայի չափանիշներն ու սահմանները»	Ռուբեն Մելքոնյան, Լորանս Ռիթթեր, Սերգեյ Մինասյան, Հրաչյա Արզումանյան, Հայկազուն Ալվրցյան
12.	«Կրոնափոխ, դավանափոխ հայության խնդիրները»	Գագիկ Հարությունյան, Ռուբեն Մելքոնյան, Հայկազուն Ալվրցյան, Կարեն Խանլարյան, Սերգեյ Վարդանյան, Արա Պապյան, Արեստակես Միմավորյան
13.	«Իսրայելը մեր ժամանակներում»	Դան Շապիրա
14.	«Արևմտահայության խնդիրները հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում»	Ռուբեն Մելքոնյան Գագիկ Հարությունյան
15.	«Հոգևոր անվտանգության խնդիրները»	Գագիկ Հարությունյան Հովակիմ վարդապետ Մանուկյան Կարինե Նաչաջյան Դավիթ Ջամալյան
16.	«Արևմտահայության կազմակերպման հիմնախնդիրները (WAC-ի հետ համատեղ)»	Անուշավան Դանիելյան Կարեն Միքայելյան Գագիկ Հարությունյան Ռուբեն Սաֆրաստյան Արդեն Շելեֆյան

Կենտրոնը համագործակցում է ՀՀ ԿԳՆ-ի և Գիտության պետական կոմիտեի հետ:

Ուսումնական կենտրոնի 2010թ. գործունեության հիմնական ուղղությունները

2010թ. ընթացքում նախատեսվում է անցկացնել դպրոցներ՝ «Տեղեկատվական անվտանգության» և «Հայության անվտանգության» թեմաներով:

Կշարունակվի և կխորացվի ՀՀ ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի հետ համագործակցությունը, մասնավորապես՝ «դպրոցների, գիտաժողովների անցկացման ոլորտում: Կկազմակերպվեն համատեղ սեմինարներ, «Նորավանքե ԳԿՀ-ի կողմից կմատուցվեն փորձագիտական ծառայություններ:

Նախատեսվում է նաև ակտիվացնել կապերը ՀՀ Կրթության և գիտության նախարարության հետ, մասնավորապես ուսումնական ծրագրերի շուրջ:

5. ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ղեկավար՝ Լուսինե Բաղդասյան

Կենտրոնում ընդգրկված են 8 աշխատակից՝ Լուսինե Բաղդասյան (ղեկավար), Խոնարհիկ Քարաուղլանյան, Անահիտ Հարությունյան, Լիլիթ Մելիքսեթյան, Տաթևիկ Քարաուղլանյան, Ռուզաննա Մանուկյան, Գևորգ Հայրապետյան, Ժանետա Գալստյան:

Կենտրոնի նպատակն է իրականացնել հրատարակչական աշխատանքները (պարբերականներ, գրքեր, ժողովածուների հրատարակում և այլն), մշակել, տեղակայել, կանոնավոր շահագործել ու նորացնել ԳԿՀ ինտերնետային կայքը, հարստացնել գրադարանը, ապահովել նյութերի արդյունավետ տարածումը շահագրգիռ կազմակերպություններին և անհատներին, ամրապնդել «Նորավանք ԳԿՀ կապերը շահագրգիռ հաստատությունների և անհատների հետ:

2009թ. ընթացքում լույս են տեսել.

1. «21-րդ ԴԱԸ ամսագիր - 6 համար,
2. «21-й БЕК ամսագիր – 4 համար,
3. 21st CENTURY – 2 համար,
4. «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» ամսագիր – 6 համար,
5. «Գլոբուս Ազգային անվտանգություն» ամսագիր – 6 համար,
6. «Армянская бизнес-элита России (биографический справочник)» գիրքը,
7. «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը» գիրքը,
8. «Մեր հաղթանակները քառահատորի երկրորդ հատորը,
9. «Հայությունն Իսրայելում. որոշ խնդիրներ» գիրքը,
10. «Բալամացված հայերի խնդրի շուրջ» գիրքը,
11. «Հայկական տեղեկատվական համայնքային ռեսուրսները հետխորհրդային երկրներում» գիրքը,
12. «Ջավախահայության որոշ հիմնախնդիրները» գիրքը,
13. «О некоторых проблемах информационной безопасности» նյութերի ժողովածուն:

«Նորավանք ԳԿՀ www.noravank.am կայքում զետեղվում են Հիմնադրամի վերլուծական հրապարակումները և հետազոտությունները, ինչպես նաև «Նորավանք-ի գործունեությանը վերաբերող այլ նյութեր: Ներկայումս www.noravank.am-ը Հայաստանում գործող վերլուծական ամենախոշոր ինտերնետային ռեսուրսն է, որից օգտվում են ավելի քան 80 երկրներում, հիմնականում՝ Ռուսաստան, ԱՄՆ, Կանադա, Ուկրաինա, Գերմանիա, Ֆրանսիա, Ադրբեջան:

Մշակվել է «Նորավանք ԳԿՀ նոր ինտերնետային կայքը:

Կայքէջում 2009թ. զետեղված նյութերի ընդհանուր թիվը կազմել է 732, որոնցից հայերեն բաժնում՝ 299, ռուսերեն բաժնում՝ 270, անգլերեն բաժնում՝ 163: Ընդհանուր առմամբ կայքէջում զետեղված նյութերի թիվն է՝ 2433 (2009թ.՝ 732, 2008թ.՝ 610, 2007թ.՝ 477, 2006թ.՝ 414, 2005թ.՝ 200), որոնցից վերլուծական բնույթի նյութերի քանակը կազմում է 1815:

2009թ. ընթացքում ապահովվել է կայքէջում զետեղված բոլոր նյութերի (հայերեն, անգլերեն, ռուսերեն) առաքումը բաժանորդներին: Կայքէջում բաժանորդագրվել են 866 այցելու (հայերեն – 663, ռուսերեն – 581, անգլերեն – 556):

2009թ. կայքէջի այցելուների ընդհանուր թիվը կազմում է **123.200**: Միջին այցելությունների քանակը կայքէջ 2009թ. կազմել է **օրական 400 հոգի**, որը 2,5 անգամ ավելին է, քան 2008թ. և 4,5 անգամ ավելի, քան 2007թ.:

2010թ. նախատեսվում է հրատարակել՝ «21-րդ ԴԱԸ» - 6 համար, «21-ի Եզե» - 4 համար, «21-st Century» - 2 համար, «Գլոբուս Էներգետիկ և տարածաշրջանային անվտանգություն» - 6 համար, «Գլոբուս Ազգային անվտանգություն» - 6 համար, «Մեր հաղթանակները քառահատորի 3-րդ հատորը և համաձայն նախապես հաստատված ծրագրերի, 6 հիմնարար հետազոտություններ՝ գրքերի տեսքով:

6. ԳՆՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳԻՐ

2009թ. կատարվել են «Նորավանքե ԳԿՀ գործունեության ապահովմանն ծրագրի գծով հետևյալ աշխատանքները:

Տարեսկզբին «Նորավանքե ԳԿՀ կառուցվածքին համապատասխան իրականացվել է նոր ծրագրերի և կենտրոնների 2009թ. գործունեության ուղղությունների, հաստիքների և աշխատողների վարձատրության սահմանում: Դրա հիման վրա իրականացվել են աշխատանքային անձնակազմի հետ համապատասխան պայմանագրային փոփոխությունների հրամանագրումը, որի համար կազմվել են 45 աշխատանքային պայմանագրերի փոփոխություններ: Հիմնադրամի աշխատանքների 2009թ. ծրագրերի ապահովման նպատակով կազմվել են շուրջ 125 հրաման, գիտական և ստեղծագործական աշխատանքների 170 պայմանագիր, անձնական գործեր:

2009թ. «Նորավանքե գիտակրթական հիմնադրամը ձեռք է բերել 3.1 մլն դրամի ապրանքանյութական արժեքներ, այդ թվում՝ սարքավորումներ 2.6 մլն դրամի, կահույք 536 հազ. դրամի, նյութեր և այլ ապրանքներ, կատարվել են 4.2 մլն դրամի կոմունալ ծախսեր:

Պահպանվել և իրականացվել է «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի ավտոմեքենայի վերանորոգման աշխատանքների փաստաթղթավորման հետ կապված կարգը՝ այդ վերանորոգումների երաշխիքային ժամկետների ընդգրկումով, աշխատանքներ են տարվել բակի բարեկարգման, կանաչապատման և ձևավորման ուղղությամբ:

Կատարվել է «Նորավանքե գիտակրթական հիմնադրամի Գ.Նժդեհի 23/1 հասցեի շենքի 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի սանհանգույցների ընթացիկ նորոգում: Մշտապես իրականացվել են շենքի և տարածքի մաքրման աշխատանքները: Ձմռան սեզոնին նախապատրաստվելու համար կարգավորվել է ջեռուցման համակարգը:

Ուշադրության կենտրոնում է եղել «Նորավանքե ԳԿՀ-ին սեփականության իրավունքով պատկանող Վայոց ձորի մարզի Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական համալիրը, որի պատկանելության հարցը քննարկվել է ՀՀ կառավարությունում և ընդունվել է որոշում այդ շենքը ՀՀ Պաշտպանության նախարարությունից հետ վերցնելու և «Նորավանքե-ին հանձնելու համար, որի ինչպես պահպանման, այնպես էլ կահավորման համար անհրաժեշտ են լինելու ֆինանսական միջոցներ, որոնք ներկայումս նախատեսված չեն «Նորավանքե-ի ֆինանսական հատկացումների մեջ: Մեր կողմից կատարված նախնական հաշվարկով «Ամաղու գյուղի տարածքում գտնվող գիտաուսումնական մասնաշենքը «Նորավանքե ԳԿՀ-ին հանձնելու դեպքում «Նորավանքե ԳԿՀ-ին լրացուցիչ անհրաժեշտ է 26,2 մլն դրամ:

ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ հաշվետվություններ են ներկայացվել ՀՀ կառավարության աշխատակազմին, ինչպես նաև հարկային, պետական սոցիալական ապահովագրության մարմիններին և թաղապետարանին:

Կազմվել և ՀՀ կառավարության աշխատակազմին է ներկայացվել «Նորավանքե ԳԿՀ-ի 2010-2012թթ. բյուջետային միջնաժամկետ ծախսային ծրագիրը, որը ներառել է «2010-2012թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը-ը՝ հաշվի առած «Նորավանքե ԳԿՀ զարգացման ծրագրերը և 2010թ. բյուջետային հայտը, 2009թ. տարեվերջին կատարվել են նաև տարեկան գույքագրման աշխատանքները:

2009թ. իրականացվել է «Նորավանքե ԳԿՀ 2008թ. գործունեության աուդիտը՝ «Աուդիտ Սթարե աուդիտորական կազմակերպության միջոցով: «Հայաստանի Հանրապետությունն օրաթերթում հրապարակվել են «Հիմնադրամի մասին ՀՀ օրենքով պահանջվող «Նորավանքե ԳԿՀ գործունեության մասին հաշվետվությունը և աուդիտորական եզրակացությունը, որի մասին գրավոր տեղեկացվել է նաև ՀՀ Արդարադատության նախարարությունը:

Հավելված 4-ում կցվում է «Նորավանքե ԳԿՀ 2009թ. ստացված միջոցների և կատարված ծախսերի մեծությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ աղյուսակի տեսքով:

**Հայագիտական կենտրոնի շրջանակներում հրատարակված աշխատանքները (թվով 57)
«Նորավանքե ԳԿՀ աշխատակիցների կողմից (45)**

Գրքեր

1. Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, - 2009, «Նորավանքե ԳԿՀ, ՀՀ Սփյուռքի նախարարություն:
2. Ջավախահայության որոշ հիմնախնդիրներ, - 2009, «Նորավանքե ԳԿՀ, ՀՀ Սփյուռքի նախարարություն:

Հոդվածներ

3. Ռուբեն Մելքոնյան, «Էրզնեքոնի հայկական ուղղվածության շուրջ», Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2009թ., թիվ 1:
4. Ռուբեն Մելքոնյան, «Թուրքիայի հայության խնդիրների շուրջ», Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2009թ., թիվ 3:
5. Ռուբեն Մելքոնյան, «Հայերի նկատմամբ թուրքական պետական քաղաքականության դրսևորումների շուրջ», Գլոբուս. Ազգային անվտանգություն, 2009թ., թիվ 5:
6. Ռուբեն Մելքոնյան, «Թուրքիայի հայության փոխադարձ ընկալման հարցի շուրջ», Հանրապետական, 2009թ., թիվ 1:
7. Ռուբեն Մելքոնյան, «Էթնիկ ծագման խնդիրը Թուրքիայի քաղաքական օրակարգում», Հանրապետական, 2009թ., թիվ 2:
8. Ռուբեն Մելքոնյան, «Թուրքիայում հայկական ծագման դրսևորումների շուրջ», Հանրապետական, 2009թ., թիվ 3:
9. Ռուբեն Մելքոնյան, քրդական «Թիրոժե ամսագրում տպագրված Միքայել Ասլանի հարցազրույցի թարգմանություն, Հանրապետական, 2009թ., թիվ 5:
10. Ռուբեն Մելքոնյան, «Թուրքիայի հայության որոշ խնդիրներ», Հանրապետական, 2009թ., թիվ 6:
11. Ռուբեն Մելքոնյան, «Ազգայնամոլության նոր դրսևորումներ Թուրքիայում», Հանրապետական, 2009թ., թիվ 7:
12. Ռուբեն Մելքոնյան, «Ուշագրավ փաստեր Թուրքիայի հայության վերաբերյալ», Հանրապետական, 2009թ., թիվ 8:
13. Ռուբեն Մելքոնյան, «Տեղանունների թուրքացումը հանրապետական Թուրքիայում», Հանրապետական, 2009թ., թիվ 9:
14. Ռուբեն Մելքոնյան, «Հայ-թուրքական արձանագրությունների շուրջ», Հանրապետական, 2009թ., թիվ 10:
15. Ռուբեն Մելքոնյան, Մուշեղ Լալայանի «Ազգային գաղափարախոսության խնդիրների շուրջ գրքի գրախոսություն, ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 2008թ., թիվ 3, նաև տեղադրվել է «Նորավանքե ԳԿՀ-ի կայքում:
16. Ռուբեն Մելքոնյան, «Նոր գիրք կրոնափոխ համշենահայերի մասին (գրախոսություն)», 21-րդ ԴԱԸ, 2009թ., թիվ 5:
17. Ռուբեն Մելքոնյան, «Հայկական էթնիկ տարրի ներկայիս վիճակը Արևմտյան Հայաստանում, Արևմտահայության պահանջատիրության հիմնախնդիրները, գիտական զեկուցումների ժողովածու, Երևան, 2009թ.:
18. Հարություն Մարության, «Հայրենադարձության և աբսորբցիայի իսրայելական փորձից», 21-րդ ԴԱԸ, 2009թ., թիվ 1:
